Դա մի կատաղի կռիվ էր: Ձեր ամուսինն իր գնդացրով կործանիչ հարված հասցրեց թշնամուն ու կովեց մինչև վերջին շունչը: Այդ մարտում մենք ունեցանք կորուստներ: Վիրավորվեց պահակատեղի պետ Ագեյեվը և սպանվեց ձեր ամուսինը:

Մնաստասիա Կուզնեցովա, Ձեր ամուսինն ըն-
կալ հերոսի պես: Նրա անունն ու հերոսությունը զեռ շատ յերկար կապրի մեր հայրենիքի աշխատա-
վորության սրտերում: Ծանր է կորուստը, բայց այն չի կարող մեզ ընկճել:

Մեր նոր և ուրախ կյանքի համար, Լենինի-Ստա-
լինի կուսակցության գործի համար մենք պատրաստ ենք կռիվելու մինչև մեր արյան վերջին կաթիլը: Կանցնեն տարիներ, և ձեր տղան հերոս հոր ար-
ժանավոր փոխարինողը կդառնա:

Վոդյանյն ձեզ յե՞վ Ձեր փոքրիկին:

Պահակատեղի շքանշանակիրներ

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Մարտ—կռիվ:

Մարտիկ—կռվող:

Գնդացրորդ—գնդացի բանեցնող:

Հեծելակ—ծիավոր:

Ընկճվել—հուսահատվել խեղճանալ:

ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ ՉՐԱՀԱՆԱՎԻ ՎՐԱ

1905 թվի հունիսի 14-ի առափտայան Պո-
տյոմկինս զրահանավի նավաստիները նկատեցին, Վոր

ճաշի համար պատրաստված միսը հոտած է, փոր-
գերով լի:

Այս լուրը տարածվեց բոլոր նավաստիների շրջա-
նում, զայրույթ բռնկեց և «կայծից առաջացավ բոց»:

— Սրբիկ սպաներ: Չեն հետաքրքրվում, թե ինչ
մտով են մեզ կերակրում:

Իսկ հրամանատարը կարգադրեց.

— Ճաշը պատրաստել, և ով փոր միսը դնի,
անուճը նշանակել և ինձ զեկուցել:

Յերբ ճաշը պատրաստ եր, փոշ փոք չմոտեցավ
ճաշին:

Անմիջապես հայտնեցին հրամանատարին, փորն
շտապեց «կարգը վերականգնել»:

«Պոտյոմկին»-ի նավաստիների ամբողջ շուկատը,
700 մարդուց ավելի, տախտակամած կանչեցին և
շարքի կանգնեցրին:

Մոտեցավ զլխավոր սպան:

— Յես քանի անգամ ասել եմ ձեզ, փոր նման
անկարգություններ զինվորական նավի վրա ան-
թույլատրելի յեն: Այդ բանի համար ձեզ պետներին
այ թե փորտեղից են կախում, — և նա մատնացույց
արեց կայմի ծայրը:

Ապա լավեց մի ահարկու հրաման.

— Ով ուզում է բորշ ուտի, այս կողմը գա:

Շարքից դուրս յեկան միայն նավի հին ծառա-
յոգները, յենթասպաները: Վորոտաց մի նոր հրաման.

— Պահակախումբ, վեր:

— Յեղբայրներ, ի՞նչ եք անում: Մտաբերեցեք
մեր յերդումը, փոր մերոնց վրա չպիտի կրակենք, —
կանչեց նավաստի Մատյուշենկոն, առաջ փազելով:

Պահակախումբը, մի մարդու պես, հրացանները

փայր թողեց՝ փողը դեպի գետին: Այդ նշանակում
եր, թե չենք ուզում կրակել:

Իսկ Մատյուշենկոն նոր ուժով կանչեց.

— Յեղբայրներ, մեր ընկերներին մենակ չթող-
նենք: Վերցրեք հրացանները, փամփուշտներ զրե-
ցեք: Չարկեցեք ժողովրդի դահիճներին:

— Կորչի ինքնակալությունը: Մահ բռնակալ-
ներին, — լավեց «Պոտյոմկինի» վրա:

Հրացանները վորոտացին: Նավի վրա ձերբա-
կալվեցին ցարի ծառաները: «Պոտյոմկինն» ապրս-
տամբության դրոշ պարզեց:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Տախտակամած — նավի տախտակած յերեսը:

Կայմ — նավի վրա ամրացրած բարձր ձող:

Ահարկու — ահ աղբոյ, չերկյուղալի:

Փող — խողովակ:

ՄԵԿ ԵՆ, ՄԵԿ ԵՆ

Հէյ, ձեզ մատաղ, բանվոր աղերք,
Մեկ եր, մեկ եր, մի զարկ տվեք,
Մի զարկ տվեք ցարի գահին,
Վոր խորտակվի նա հիմնովին...

Միահամուռ մեր ուժերով,
Հերոսների արյան գնով
Թեև ընկավ ցարն իր գահից,
Բայց չի Չարդված միանգամից:

Այժմ ել ցարն է մեզ աղաչում,
Վոր խնայենք վերջին շնչում.

Բայց, ձեզ մատաղ, բանվոր տղերք,
Մեկ ել, մեկ ել, մի զարկ տվեք...
Մի զարկ տվեք ցարի գահին,
Վոր խորտակվի նա հիմնովին...

ԲԱՌԻ ԲԱՅՍՏՐՈՒԹՅՈՒՆ

Միահամուռ—միատեղ, միասին:

ՅԵՐԵԿ ՅԵՎ ԱՅՍՈՐ

Յերեկ այնտեղ վայրի լեռներ եյին.

Այսօր—Սորհրդային գործարան:

Յերեկ ամայի դաշտեր եյին.

Այսօր—Սորհրդային տնտեսութիւն:

Առաջ դաշտերը նմանում եյին կարկատած
վերմակի. գուլն-գուլն կտորներ՝ քառակուսի, յե-
ռանկյունի... և ամեն մի կտոր մի տեր ուներ:

Կոլեկտիվացումը ջնջեց սահմանները, դաշտերի
կտորները միացան, կոլտնտեսութեան ընդարձակ
դաշտեր դարձան:

Ուր առաջ գետակն եր խոխոջում, այժմ այն-
տեղ ելեկտրակայանն է դրդում:

Ուր ճահիճներ եյին—այսօր բամբակն է ծաղ-
կում:

Մուխ ծմակներում սղոցարանն է գործում,
նրա մոտով է անցնում նոր կառուցած յերկաթու-
ղին:

Ու ամեն տեղ բանվորներ, մեքենաներ...
ծուխն է բարձրանում, շողին հեփում, մոտորը
թնդում. ամեն տեղ յեռում է աշխատանքը, ու-
կառուցում ենք, կառուցում ենք անվերջ:

ՆՐԱՆՔ ԲԱԽՏԱՎՈՐ ԵՆ

Կուսակցութիւնը բանվոր Դավիդովին ուղար-
կել եր կոլտնտեսութիւնը ղեկավարելու: Նա շտա-
պում եր դաշտ:

— Կառքը լծիր, —ասաց նա ծերուկ կառապա-
նին: Ու չսպասելով, սկսեց ոգնել նրան:

Որն ամպ եր, քամի. անձրև եր կաթկթում:
Դաշտը գյուղից տասը կիլոմետր հեռու յեր: Այն-
տեղ եր առաջին բրիգադը, վոր վարած հողը ցա-
քանում եր:

Բլրի տակով անցնում եյին աշակերտներն ի-
րենց ուսուցչի հետ. նրանց հետևում եյին չորս
սայլ, վորոնց վրա ջրի տակառներ կային:

— Ես ել մեր ճուտերը. գնում են մկներին կո-
տորելու, —մտրակով ցույց տվեց ծերուկը:

Դավիդովը ժպտալով նայում եր: Յերբ մոտե-
ցան, կանգ առավ, նայեց, կանչեց յերեսաներից
մեկին՝ ուխ տարեկան մի տղայի:

— Ինչո՞ւ գամ վոր, —խոսեց տղան, ծոծրակին
քաշելով հոր զլխարկը:

— Քանի՞ մուկ ես սպանել:

— Տասնչորս:

— Դե նստիր կողքիս՝ ման ածեմ:

— Դու ել նստիր, —ասաց մի փոքրիկ աղջկա:

Շարժվեցին: Դավիդովը դարձավ տղային.

— Վո՞ր դասարանումն ես:

— Առաջին:

— Կարո՞ղ ես, մի յեկ գրասենյակ... քեզ կպատ-
վեմ, կանֆետ կտամ, խնձոր կտամ. կանֆետ սի-
րում ես:

— Ի՞նչիս ե պետք: Կանֆետն ատամներս կփը-
չացնի, այ. տես: Եւ բաց արեց բերանը, և, իսկա-
պես, առջևի յերկու ատամներն ընկած եյին:

— Ուրեմն, ընկեր յան, դու անատամ ծերձկես:

— Եզ դու յես անատամ. իմ ատամները դուրս
կգան, իսկ բոնը՝ փոչ:

— Փշուժ ես, իմս ել կգան:

— Կգան, չե մի... մեծերի ատամները չեն բուս-
նում, — ասաց ու ցատկեց կառքից: Նրան հետևեց
աղջիկը. կարծես ճպուռներ լինեյին — այնպես ցատ-
կոտում եյին:

Իսկովոր ժպտալով նայում եր. դեռ յերկար
ժամանակ հեռվում կարմրին եր տալիս անգայի
զլխարկը:

«Թող վազի հիմա այս մանչուկը՝ հոր զլխարկը
զլխին, իսկ մի տասը, քսան տարի անց նա նստած
կլինի տրակտորի վրա և ելեկտրական խոփով շուռ
ու մուռ կտա այս հողը: — Ուրիշ եր մեր մանկու-
թյունը. մորս մահից հետո քրոջս եյի պահում,
լվացք անում, ճաշ յեփում, գործարան վազում:
Այո, մեր յերեխաները բախտավոր են» — մտածում
եր Իսկովորը՝ զիտելով կանաչին տփող անծայր
դաշտը...

Խ Ր Ա Մ Գ Ե Ս Ի Ն

Կլկացող ձենիդ մատաղ,
Խրամգեսի ուրախ դիզել,
Հնչուն յերգովդ զվարճանում,
Ծափ եմ տալիս յես ել, յես ել:

Մի ժամանակ ես ձորերում
Հովվի շվին եր շնգշնգում,
Հիմա ուրախ քո գուղովն ե
Մեր սրտերում հպարտ գնգում:

Մի ժամանակ ես ձորերում
Սոված գայլերն եյին վոռնում,
Հիմա նրանց ծմակներին
Հազարաչյա լույս ե վառվում:

Ուժ ես տալիս Խրամգեսի
Շենք ու շնորհք բետոններին.
Կուչ ե գալիս ու գալարվում
Քո լույսերից մեր թշնամին:

Կլկացող ձենիդ մատաղ,
Խրամգեսի ուրախ դիզել,
Հնչուն յերգովդ զվարճանում,
Ծափ եմ տալիս յես ել, յես ել:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Խրամ—դետ, վոր թափվում ե Գուռ գետի մեջ:
Գուղով—գործարանի շահլը:
Ծմակ—խոնավ, ճահճոտ սեղ:
Բետոն—ավազի, խճի և ցեմենտի խառնուրդ, շաղախ:

ՅԵԹԵ ՇԱՏ ՍՈՎՈՐԵՄ, ԱՎԵԼԻ ԼԱՎ ԿԱՇԽԱՏԵՄ (Բուսիգինի նառից)

Յես դեռ կիսազրագետ եմ: Վոչնչի մասին այն-
քան շատ չեմ մտածում, փորքան սովորելու: Շատ
եմ ցանկանում ավելի առաջ գնալ: Ցանկանում եմ
փոչ միայն դարբին լինել, այլև իմանալ, թե ինչպես

ե մուրճը կառուցված, ինքս ել սովորեմ մուրճեր պատրաստել:

Իրքեր յերբեք չեմ կարդացել և միայն վերջերս, 2 ամիս առաջ, կարդացի առաջին գիրքը—Պուշկինի հեքիաթները: Ինձ շատ դուր յեկան:

Միայն, ճիշտն ասած, գծվարությամբ եյի հասկանում:

Յե՛վ գիտեմ յես. յեթե սովորեմ, ավելի լավ կաշխատեմ: Շատ բաներ կան այժմ, վորոնց խելքս չի հասնում: Շնորհակալ եմ մեր կառավարությունից և կուսակցությունից. նրանք ոգնեցին ինձ այս գործում, ուսուցիչներն շանակեցին, և յես կսովորեմ:

Ահա կվերագառնամ և ամբողջ ուժով կլծվեմ արտադրության և ուսման աշխատանքներին:

ԳՍՐՈՒՆ

Ձուգվել են կրկին

Անտառ ու այգի,

Վշտում ե ուժգին

Ձուրը գետակի:

Հավքերը սիրուն

Համերգ են կազմել,

Արտում ու դաշտում

Յերգ ու հորովել:

Թիթեռներն ուրախ

Թռչում են դես-դեն...

Ձան, տեսքիդ մատաղ

Գարուն ե արգեն:

ԱՏՈՒՄ ԵՄ ՔԵՉ

Ատում եմ քեզ և քո գահը,

Միահեծան գոռոզ ցար,—

Յե՛վ քո վորդոց ու քո մահը

Պիտի պեսնեմ անպատճառ:

ԲԱՌԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Միահեծան—ինքնակալ ինքնիշխան, բռնակալ, գոռոզ, հպարտ, մեծամիտ:

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻ ՓՈՂՈՑՈՒՄ

Յերեք տարվա ընթացքում ամեն որնա գնում ե աշխատանք փնտռելու, բայց միշտ իզուր:

Նա յերկու որ ե փոշինչ չի կերել, գծվարանում ե քայլել:

Նա քնում ե բաց յերկնքի տակ, այգում:

Յերբեմն նա բախտ ե փորոճում ազբի արկըղ-ներում, յերբեմն փողորմություն ե խնդրում:

Այդ բավական ե, փորպեօգի չմեռնի:

Բայց չե՞ փոք նա ցանկանում ե ապրել:

Չե՞ փոք կյանքի համար իրաժուները նրան տվել ե ամերիկյան որենսդրությունը:

Քայլում ե ասֆալտած հրապարակով: Չափազանց յերկար և ուղիղ են փողոցները: Թանութները լիքն են ապրանքներով, իսկ իր գրպանում կուպեկ չկա:

Մեկը նրան ձայն տվեց: Ծանոթ զործազուրկ ներկարարն եր:

Ներկարարի աչքերն ուռած են:

—Ի՞նչ ե պատահել:

—Նպաստի փոխարեն յես ստացա արտասովաբեր
գազ: Սան-Ֆրանցիսկոյում մեր կազմակերպած գոր-
ծադուլը ճնշելու ժամանակ արտասովաբեր գազով
ցրեցին մեզ:

Մի քանի տարի առաջ նա ել աշխատում
էր, ուներ մի փոքր խնայողություն: Բայց ահա
սկսվեց ճգնաժամը: Շատերի հետ նա ել դուրս
չպրավեց փողոց: Մի քանի ժամանակից հետո
խնայողությունները վերջացան, տան գույքը վա-
ճառքի հանվեց, բնակարանի վճար չտարով մնաց փո-
ղոցում: Մեկ որ ել կինը գնաց հաց վորոնելու և
այլևա չվերադարձավ...

Բայց մի թե միայն նրանք են գործազուրկ: Մի-
թե միայն նրանց ընտանիքը քայքայվեց: Մի լիոնավոր
ընտանիքներ աշնանը, ձմեռը և կիզող ամռան
թափառում են մեծ ճանապարհները վրա՝ որվա
ապրուստի համար պատրաստ ամեն մի ծանր աշխա-
տանք կատարելու: Նրանց մեջ կան համալսարա-
նավարտներ, մասնագետներ...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Ասֆալտած փողոց—ձյուլով հարթեցրած փողոց:
Կիզող—այրող:

ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ ՈՐՈՐԸ

Մի լար, վորդիս, վոր չես լսում
Ել մայրական քաղցր որհր—

Յես մեծ կովի յերգ եմ հյուսում
Որոցքիդ մոտ ամեն որ...

Դու լսում ես, այնտեղ, դրբսում
Շնչ ու շնուաչ, լաց ու կոծ—

Մեր արյունն է այնտեղ հոսում,
Ներկած և տուն, և փողոց...

Այնտեղ գընդեո խառն ու ցրբիվ,
Բանվոր գընդեո ահարկու,
Գաջ մրդում են մի մեծ կոիվ—
Աշխատանքի՛ և փոսկու...

Այնտեղ փոսկին տե՛ր-տիրական,
Վորպես գահիճ զըծնագեմ,
Սուր է պարգում մեր որական
Թուլյնով շաղախ հացի գեմ...

Այնտեղ հայրեր, այնտեղ փորդի՛ք
Մի նոր կյանքի յեզերքում,
Վորպես մի-մի հերոս-մարտիկ,
Մահըն են գրկում ու յերգում...

Յե՛վ թնդում է յերգը ահեղ
Պատնեշների շարքերում
Վորպես յեռնից վազող հեղեղ,
Վորպես փորոտն ամպերում...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Որոցք—որորոց:
Ահարկու—սարսափ ազդող, ուժեղ:
Դժնագեմ—գաժան:
Պատնեշ—պատ. այստեղ՝ բարիկազ:
Ալեհուլյ—վրդովված, ցատուժով:

ԿԵՆՏՐՈՆԻ ՄՏԱԾՄՈՒՆԲԸ

Նստե՛, եմ շվար
Ու միտք եմ անում,

Թե ինչպես մենակ
Ապրեմ աշխարհում:

Վոչ ջահել կնիկ
Ունեմ իմ կողքին,
Վոչ թե ու թիկունք,
Մտերիմ ընկեր,
Վոչ մի տաք անկյուն,
Վոչ արծաթ, փոսկի,
Վոչ սարքած գուլթան,
Վոչ նժույզ մի ձի...

Պակաս որի հետ
Միմիայն մի գանձ՝
Քարի նման ույժ
Տվավ ինձ հերս.
Բայց, ան, հենց են ել
Ոտար դռներում
Կերան, մաշեցին
Դարդ ու ցավերս....

Նստել եմ շվար
Ու միտք եմ անում,
Թե ինչպես մենակ
Ապրեմ աշխարհում:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Շվար—մտածույր:

Նժույզ—լավ ձի:

ՉԻԿԱԳՈՅՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱ

— Ինձ վերցրեք, յես ձախ ձեռքով վերցնում եմ
մի ամբողջ ցենսներ, — բղավեց մեկը:

— Ձե, ինձ, յես մեկ բռունցքով յեղ եմ սպա-
նում, — բղավում եր մի ուրիշը:

Յե՛վ ապա միաժամանակ լավեցին հինգ հարյուր
զործազուրկների խառնիճադանձ ձայները:

— Ի՛նձ վերցրեք, ինձ վերցրեք... — ձչում եր քաղ-
ցը, ճչում ելին հույան ու թախիժը: Դիրեկտորը
վախեցած նայում եր իր վրա հառած հինգհարյուր
մարդկանց դեմքերին:

Գործակատարը հանգիստ բարձրացրեց ձեռքը և
անմիջապես տիրեց լուսթյուն:

— Սյրպես չի լինի, տղերք, մենք ձեզ կստու-
գենք ջենտլմենորեն: Ձեզնից յուրաքանչյուրը պետք
է ունենա աշխատանք նվաճելու հույս: Լսեցեք ու-
շազիր, ինձ մոտ կա թիթեղե 27 համար, յես նը-
րանց կգցեմ ձեզ: Թող ձեզնից յուրաքանչյուրը բռնի
այդ համարը: Ում մոտ վերջում գտնվեցին համար-
ները, նրանք կընդունվեն աշխատանքի: Իրանք կլի-
նեն ամենից ուժեղները: Աշխատանքը յերկու շա-
բաթվա յես:

Գործակատարը բարձր թափահարեց ձեռքը
և թիթեղները շարտեց ամբոխի մեջ: Վորպես
արծաթե թռչնակների մի յերամ, թիթեղները փորոշ
ժամանակ սավառնում ելին ողում: Հարյուրավոր
ձեռքեր ձգվեցին դեպի նրանք — և կռիվն սկսվեց...

Բռունցքները հարվածում ելին գանգերին ու
դեմքերին: Վոտքերը տրորում ելին փորեր ու կո-
ղեր: Մարդիկ իրար ձեռքերից խլում ելին արժեքա-
վոր թիթեղի կտորը: Մարդկային մարմինների մի
ամբողջ գունդ գալարվում եր յերկաթե դարպաս-
ների առաջ, իսկ վերևում, պատի վրա կանգնած
ելին դիրեկտորը, զործակատարը և լարված ու թյամբ

հետևում եյին մարդկանց պայքարին, փորոնք կըս-
վում եյին աշխատանքի իրավունքի համար:

Ահա գործազուրկ նեզրի կողքին կանգնած մի
գունատ պատանի ողում բռնեց արծաթե թռչնակ-
ներից մեկը: Նեզրը բռնեց պատանուն: Պատանին
կծեց նեզրի ձեռքը, բայց նա ցավ չեր զգում, նա
մտածում եր միայն աշխատանքի և հացի մասին,
փոր պետք է հայթայթեր քաղցած մոր և յեղբայր-
ների համար: Նա սկսեց ծեծել պատանուն այնքան,
մինչև փոր նա հանկարծ ճչաց «մայրիկ» և գլորվեց
ցած: Նեզրն իր ձեռքում պահել եր յերկաթե համա-
րը: Բայց պատանու ճչոցն ասես ելեկտրական հար-
ված լիներ, և նա թերպեց, փորպեսզի բարձրացնի
պատանու վտիտ մարմինը: Հենց այդ նույն պահին
ինչ-փոր մեկի ձեռքն ուժեղ սեղմեց նեզրի կողորդը,
և նա նորից սկսեց կուպել թիթեղի համար:

Գործակատարը հիացած դիմեց զիրեկտորին.
— Ապա նայեցեք այս նեզրին, հիանալի հարված
եր, իսկական բոքսյոր:

Նեզրն առաջինը մտալ գործարանի բակը:
Նրա աջ բռունցքն ամուր սեղմում եր համարը,
և թիթեղը խոր նստել եր նրա ձեռափի մեջ: Տանջ-
ված՝ նա ընկալ բակի ասֆալտի վրա և փակեց
աչքերը: Այսպես պառկած եո նա, չմտածելով
փոչնչի մասին, մի կտոր թիթեղ գողացող ձեռ-
քում պահած: Յերբ նեզրը նորից բացեց աչքերը
և փոտքի յեյալ, դարպասի նեց գոնակից անցնում
եր վերջին մարդը—27-րդը: Նրա շոկուներսեռի փոս
հաղից գոյացել եյին առյառ կաթիլներ: Նրա գլխի
վրա սեխն եր տալիս պեւը:

Գործակատարն ու զիրեկտորն իջան պատի վը-
րայից:

— Ապա նայեցեք, զիրեկտոր, այս տղաների
վրա: Գործակատարը հպարտությամբ ցույց տվեց
27 ընտրովի բանվորների վրա:— Սրանք բոլորն ել
ատլետներ են: Նրանք կաշխատեն ինչպես գումեշ-
չեր:

ԲՄ.ՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Ցենտներ—հարյուր կիլոգրամ (վեց փութ):
Սառնիճաղանձ—խառնիխուռն, իրար խառնված, անհասկանալի:
Ջենտլմեն—քաղաքավարի, կըթված, կուլտուրական մաքու:
Բոքսյոր—բոքս մենամարտող:
Ատլետ—հսկա, ամուսնացած:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ
(1914—1918)

Չորս տարի, 3 ամիս և 26 որ տևեց այս
սպանդը:

69 միլիոն մարդ կտրվեցին Փաբրիկներից, գոր-
ծարաններից և արտերից:

Անմարդաբնակ դարձան գյուղերը, քաղաքները.
խոպան մնացին դաշտերը, լքված մնացին ընտանի-
ները, ժանգոտեցին դազգյահները...

1580 որ ու գիշեր վորոտացին թնդանոթներ
տարածելով սարսափ, մահ ու կործանում...

1580 որ ու գիշեր պայթեցվեցին նավեր, կա-
մուրջներ, յերկաթուղիներ, բնակարաններ, վո-
չընչացվեցին կենսամթերքներ, Փաբրիկներ և գոր-
ծարաններ:

1580 որ ու գիշեր գետին թափվեցին յերկաթե փշալարեր, փորվեցին խրամատներ, բլինգաժներ և դերեզամաններ, փորպեսզի նրանց մեջ թաղեն 10 միլիոն սպանվածներին:

Հազարավոր գնացքներ, միլիոնավոր ձիեր և ավտոմոբիլներ զբաղված էյին սպանվածների, վիրավորվածների և թուճավոր զազերով խեղդվածների փոխադրությամբ...

10 միլիոն զերի ստրուկներ ցրիվ տվին փող աշխարհով, փորոնցից մի մասը մինչև այժմ ել տառապում է Ասիայի ու Աֆրիկայի անապատներում:

10 միլիոն հաշմանդամ փողոց նետվեցին...

5 միլիոն մարդ քաղցից մահացան՝ թիկունքում:

Միմիայն Ռուսաստանը պատերազմի վրա ծախսեց 45 միլիարդ փոսկի ուրբի:

Այսոր ել Փաշխատներն ամբողջ աշխարհը ցանկանում են նորից պատերազմի զաշտի վերածել: Գերմանիայի, Իտալիայի ու Ճապոնիայի Փաշխատները կործանում են Հարեշատանը, Իսպանիան, քարուքանդ են անում Չինաստանը, հրդեհի յեն մատնում կուլտուրայի ու պատմության հազարամյա հուշարձանները, փոչնչացնում են միլիոնավոր աշխատավոր ժողովուրդ:

Միմիայն Խորհրդային Միութ յունն է, վոր պաշտպանում է խաղաղությունը, միմիայն լենինի ու Ստալինի պանծալի կուսակցությունն է, վոր պաշտպանում է ամբողջ աշխարհի աշխատավորության խաղաղ կյանքն ու աշխատանքը:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Սոպան—անմշակ:
Հաշմանդամ—խեղանդամ (ինվալիդ):
Բլինգաժ—ապաստարան (զետնի տակ):

Մեր գյուղն են ե, վոր հպարտ
լեռների մեջ միգապատ,
Խոր ձորերի քարափին,
Ձեռքը տված ճակատին,
Միտք ե անում տխրադեմ,
Ի՞նչ ե ուզում—չգիտեմ...
Պաս չենք այնտեղ մենք ուտում
Ու ջերմեռանդ աղոթում,
Ժամ ենք գնում ամեն որ...
Բայց միշտ ցավեր նորանոր,
Միշտ մի աղետ, մի վնաս
Գալիս ե մեզ անպակաս:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Միգապատ—մեզով, մտախուզով պատած:
Տխրադեմ—տխուր դեմքով:
Ձերմեռանդ—մեծ հավատով:
Աղետ—փորձանք, դժբախտություն:

ՄԱՐԴԸ ՁԻ

Կան յերկրներ, հանաք չի,
Մարդն ե դառել մարդուն ձի,
Յեվ փողատեր չինացին
Մարդն ե դարձրել կառքին ձի
Ռիկչին ձի յե, կառապան,
Առած վարձը՝ չնչին բան:

«Հողիդ դուրս գա, մյ կուլի,
կառքդ հանիր ծուլ-ծուլի:
Թե չե գորշ չեն տա քեզ,
Թեկուզ սովից դու մեռնես»:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Ռիկշի—յերկանիվ Թեթև կառք քաշող մարդ:
Կուլի—չինական մշակ:

ՅԵՐԿՈՒ ՄԵՔԵՆԱ

Այս դեպքը պատահեց Ամերիկայում:

Բանվոր Սմիտը տուն յեկավ դժգոհ:

— Ի՞նչ ե պատահել, հայրիկ, — հարցրեց փոր-
զին:

— Գործարանը նոր մեքենա բերին, նա իմ
գործն ե անելու, պտուտակներ ե կտրելու:

— Ել ինչո՞ւ յես դժգոհում, չե՞ փոր դու
ինքդ եյիր ասում, փոր աշխատանքդ ծանր ե:

— Առաջ ծանր եր, իսկ այժմ փոշ մի աշխա-
տանք չեմ ունենալու: Գործարանատերը դուրս ե
շպրտում յերկու հարյուր բանվոր: Նրան շատ
ձեռնտու յե մեր փոխարեն մեքենաներ բանեցնել
մեքենաներն արագ են աշխատում, եժան գործ են
տալիս, մեքենան չի դժգոհում, այլ հլու հպատակ

ե տերերին: Այժմ մենք քաղցած ենք մնալու:

Իսկ ԽՍՀՄ-ի քաղաքներից մեկում կոմյերի-
տական բանվոր կիմն ուրախ-ուրախ տուն յեկա-
ու հայտնեց.

— Նոր մեքենա բերին, նա շատ ավելի լավ
կտրում պտուտակները, քան Թե ձեռքի աշխա-

տանքը. յերկու հարյուր բանվոր ազատվում են.
Ինձ փոխադրեցին ուրիշ աշխատանքի:

— Իսկ մյուսներին հեռացնում են, ի՞նչ ե,—
զարմացած հարցրեց մայրը:

— Ինչպե՞ս... Ինչո՞ւ հեռացնեն, մեր յերկրում
ամեն մի ձեռք անհրաժեշտ ե: Ով մի գործից դուրս
ե գալիս, մի ուրիշ աշխատանքի յե անցնում: Մեզ
մոտ գործազրկուլթյունն իսպառ վերացել ե:

ԲԱՌԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ—Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների
Միություն:

ԼԻՆԱ ՈՂԵՆԱ

1.

Լինա Ողենան իսպանական հերոս ժողովրդի
հարազատ աղջիկներից մեկն եր: 1936 թ. սեպ-
տեմբերի 20-ին Լինա Ողենան մեռավ հերոսի
մահով: Գրենադա քաղաքի մոտ տեղի ունեցած
կռիվների ժամանակ կոմյերիտուհի հրամանատար
Լինա Ողենան առաջնորդում եր իր գորամասը:
Նա անվախ ու խիզախ, քաջի նման կովերով
առաջ գնաց, իսկ նրա գորամասը հետ մնաց: Մեկ
ել հանկարծ Լինան նկատեց, փոր ինքը շրջապատ-
ված ե թշնամիներով: Հասկացավ իր գրությունը,
չվախեցավ, չտատանվեց, բայց վճռեց թանգ ծա-
խել իր կյանքը: Նա գիտեր, փոր թշնամիների ձեռ-
քը պետք ե ընկնի, բայց կանգ առավ, չոքեց, իր

ունեցած գնդակներէց մեկը պահեց և մյուս բոլոր գնդակներէց ամեն մեկով մի Ֆաշիստ սպանեց: Վերջին, պահած գնդակով վերջ տվեց իր յերիտասարդ ու գառմուռն կյանքին: Թշնամու ձեռքն ընկալ նրա անշունչ մարմինը միայն:

Կես ժամ հետո նրա շոկատը վրա հասաւ: Իր սիրելի հրամանատարի դիակը տեսնելով շոկատը կատաղի հարձակվեց թշնամու գորամասի վրա և վոչ մեկին կենդանի չթողեց: Սպա վերցրին հերոս աղջկա դիակը և տարան:

2.

Լինա Ողենայի մահը մեծ ցավ պատճառեց վոչ միայն Իսպանիայի, այլև ամբողջ աշխարհի բանվորներին ու նրանց զավակներին:

Մեր՝ Խորհրդային յերկրի բոլոր յերեխաները կարգացին, իմացան Լինա Ողենայի կյանքի և հերոսական մահվան մասին: Բոլորը հարգում են նրա անմահ հիշատակը:

Այդ հարգանքի սպացույց ե Լինա Ողենայի մորը գրված՝ ինն տարեկան Ստումա Մաուերի նամակը, Սիմֆերոպոլ քաղաքից:

Սիմֆերոպոլի 10-րդ դպրոցի աշակերտուհի՝ ինն տարեկան Ստումա Մաուերը 1937 թվի մարտի 16-ին նամակ ե ուղարկել Բարսելոնա՝ Ֆաշիստ խռովարարների դեմ ունեցած կռիվներում հերոսաբար ընկած կոմյերիտուհի Լինա Ողենայի մորը:

Նա գրել ե.

«Սիրելի մորաքույր Ողենա»

Մեծ գեթախուռլթյուն ե պատահել մեզ: Բայց դու մի լար: Հանրապետական Իսպանիայում նույն

պիսի ուրախ կյանք կլինի, ինչպես մեզ մոտ: Ելի մի լար նրա համար, վոր դու քո սեփաշյա Լինայի փոխարեն ունես կապուտաշյա Լինա: Իա իմ քույրն ե - Լինա Մաուերը: Նա ծնվել ե անցյալ տարվա ոգոստոսին, յերբ քո Լինան հերոսաբար ընկալ Ֆաշիստների դեմ կռիվիս: Յեվ անա այդ ժամանակ յես ու մայրիկս վորոշեցինք մեր փոքրիկին Լինա անունը տալ, վոր պահպանենք քո հերոսուհի Լինայի հիշատակը և կարեկցենք ձեր վշտին:

Վոչ յեղիբ, թանգազին մորաքույր Ողենա: Մի մոռացիբ, վոչ դու մի Լինա ել ունես»:

Ստումա Մաուեր

ԲԱՌԵՐԻ ԲՍՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Տառանվել—կասկածել, յերկմտել (շարժվել):
Սպացույց—մի դեպք հաստատող փաստ, նշան:
Կարեկցել—ցավել, ափսոսել, վշտակեց վինել:

Փ Ա Ն Ո Ւ Մ Տ

1936թ. դեկտեմբերի 15-ին ժամը 13-ին իսպանական խռովարարների №1 հիդրոինքնաթիռն ողբարձրացաւ: Նրան հանձնարարված եր ուղեկցել խռովարարների նավերին: Ինքնաթիռի վրա ելին կրտսեր ողաչու Անտոնինոն, բորտմեխանիկ Եվարիստոն և ավագ ողաչու՝ Ֆաշիստական զորամասերի լեյտենանտ Մորենոն:

Անտոնինոն և Եվարիստոն վաղուց ելին սպասում այդ որվան: Լինելով բռնի կերպով մորիլիզացիայի յենթարկվածներ՝ նրանք ծրագրել ելին

հանրապետականների մոտ փախչելու պլանը: Յեւ
ահա մոտեցել էր հարմար ըուպեն:

Անտոնինոն ինքնաթիւը աննկատելի կերպով
ուղղեց դեպի հյուսիս:

Լեյտենանտ Մորենոն զգալով ինչ-վոր վատ
բան՝ հրամայեց ինքնաթիւն ուղղել ծրագրած
ճանապարհով: Անտոնինոն չհպատակվեց:

— Պետք է հանձնվել հանրապետականներին,—
ասաց նա:

Իրան փորպես պատասխան, Մորենոն ղեկն
ուժեղ կերպով ուղղեց դեպի խռովարարների նա-
վահանգիստը: Այդ ժամանակ Անտոնինոն պահես-
տի ղեկն ավելի ուժգնությամբ թեքեց դեպի հյու-
սիս: Նրանց մեջ կռիվ սկսվեց: Բորտմեխանիկ
Եվարիստոն կրակեց Մորենոյի վրա, բայց վրիպեց:
Եվարիստոն կրակեց յերկրորդ անգամ և վիրավո-
րեց նրան մեջքից: Մորենոն ամբողջ թափով ընկավ
ղեկի վրա և աշխատում էր կանգնեցնել մեքենա-
ները՝ ինքնաթիւը խորտակելու նպատակով: Եվարիս-
տոն կրակեց յերրորդ անգամ: Մորենոն ստա-
ցավ մահացու հարված և լռեց:

Մեկ և կես ժամից հետո Անտոնինոն հիզրո-
ինքնաթիւը հաջող կերպով իջեցրեց հանրապետա-
կանների անրողորմում:

Հանրապետականները մեծ ցնծությամբ ղիմա-
վորեցին հերոս փախստականներին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Հիզրոինքնաթիւ— ոգնաւ, վոր կարող է և ջրի վրայով գնալ
Վրիպել— չկաշել:

Անրողորմ— ինքնաթիւներ իջնելու հրապարակ:

ՀԵՐՈՍ ԲԺԻՇԿԸ

Պրոկոպակի հանքերի հանքահորերից մեկում
աղես պատահեց: Փլվածքի տակ մնաց հանքափոր
Կարբովսկին:

Փրկարար արշավախմբին հաջողվեց 13 ժամվա
համառ աշխատանքից հետո մի նեղ անցքով մտնե-
նալ փլվածքին:

Ընկեր Կարբովսկու ձախ փոտքն ամբողջովին
ՂախՂախվել էր ու ծածկվել քարածխի կույտերով:

Նրա գլխի վերև հանքի հսկայական մի կամար
էր կախվել, վոր ամեն ըուպե կարող էր փլվել:

Կարբովսկու դրուժյունը ծայրահեղ փտանգա-
վոր էր: Փրկուժյան միայն մեկ միջոց էր մնում.
տեղնուտեղը կտրել ՂախՂախված փոտքն ու զուրս
հանել նրան:

Այդ պատասխանատու և խիստ փտանգավոր
վիրահատությունը հանձն առավ բժիշկ Նիկիֆորովը:
Վերցնելով անհրաժեշտ գործիքներ ու ղեղո-
րայք՝ բժիշկը փորսող տալով հասավ Կարբովսկուն:
Քնացրեց նրան և սկսեց վիրահատությունը՝ առանց
փախենալու փլվածքի փտանգից:

Վիրահատության միջոցին ածխի մի մեծ կտոր
ընկավ բժշկի գլխին, ձեռքից ցած գցեց դանակը:
Սակայն բժիշկ Նիկիֆորովը ցավից իրեն չկորցրեց:
Նա շարունակեց վիրահատությունը:

Քիչ հետո Կարբովսկուն զուրս հանեցին փլվածքի
տակից:

Նրա կյանքը փրկված էր:

ՄԻՉՈՒՐԻՆԻ ԱՅԳԻՆ

Մի մեծ գյուղում, բերքի տոնի ժամանակ, գյուղատնտեսական ցուցահանդես կար:

Ամեն տեսակ հացահատիկների, բանջարեղենների հետ դրված էյին նաև սքանչելի պտուղներ:

Գյուղացիները հավաքված նայում էյին այդ պտուղներին:

— Չարմանում եք, — ասաց գյուղատնտեսը, մոտենալով նրանց. — դուք զեռ այդ եք տեսել. բա Միչուրինի այգին վոր տեսնեք, ի՞նչ կասեք:

— Միչուրինն ո՞վ ե, ընկեր վահրամ, նրա այգին ի՞նչ տեսակ ե վոր, — հարց տվեց գյուղացիներից մեկը:

— Այ, լսեցեք պատմեմ:

Գյուղացիները շրջապատեցին գյուղատնտեսին, և նա շարունակեց.

— Մորհրդային մեծ գիտնական, հայտնի այգեգործ եր Միչուրինը: Նա տասնյակ տարիներ փորձեր եր անում, փորպեսզի նոր տեսակի բույսեր աճեցնի մեր յերկրում: Յես յեղել եմ նրա մշակած այգիներում և ահա թե ինչեր եմ տեսել:

Ահա թփերի մի մարզ. սրանք թզուկ տանձենիներ են. տանձը նույնն ե, սովորական տանձից ել խոշոր ու համեղ, բայց ծառն այնքան փոքր ե, վոր կարող ես վրայից թռչել. այսպես ավելի քիչ տեղ ե բռնում, հեշտ ե խնամելն ու պտուղը հավաքելը:

Ահա բալենին. նա աճում ե ծաղկամանի մեջ, սեղանի վրա: Բայց տեսնե՞ք՝ ինչքան բալ կա վրան, ամեն մի կոթի վրա վոչ թե զույգ բալեր են աճել, այլ հիսուն-վաթսուն հատ:

Միչուրինի այգում այնպիսի խնձորներ կան, վորի տակ պահակները վախենում են քնել: Չեքերիդ ափերի մեջ հագիվկարաց ես տեղավորել մի խնձորը: Յեթե ծառից վայր ընկնի տակը քնած պահակի գլխին, կարծում եմ, այնքան ել հաճելի չի լինի նրա համար:

Միչուրինի մտենու մի թուփը տալիս ե վեցյոթ կիլոգրամ մորի, այն ել ի՞նչ մորի. ամեն մի հատիկը չորս անգամ մեծ ե մեր մորուց, համեղ ե և դիմացկուն. ուր ուզում ես ուղարկիր — չի տրորվի, չի փչանա:

Ամենացուրտ և ամենաառաջ յերկրների բույսերը Միչուրինն ընտելացրեց, և այժմ նրանք աճում են մեր յերկրի ամեն մի մասում:

— Մեղ մոտ ել պետք ե այդ փորձերն անենք, — վրա բերեց կոմյերիտական կեմիկը:

— Այո, այո, — ձայն տվին այս ու այն կողմից կուլանտեսականները:

ՄԵՐ ԿՈՒԽՈՂԻ ԱՐՏԵՐԸ

Մեր կուխոզի արտերը
Տրակտորը վարել ե,
Կուխոզն այսոր ծովի պես
Կանաչել ե, ծաղկել ե:
Մեր կուխոզի արտերը
Նախշուն բերքով հասել են,
Ցորենի ծով հասկերը
Ճոխ բերքերով լցվել են:
Ու բացվել են վարդերը,
Որորվում են հասկերը:
Հազար երնեկ նոր կյանքին,
Շենացել են դաշտերը:

Բացվել էս, ջան, հեյ բամբակ,
Լցվել էս, ջան, մեր բամբակ:
Չանաք անենք փաթիլդ,
Բարդան անենք քեզ, բամբակ:

Արի նագուկ, ջան բամբակ,
Մալանչ անեմ, իմ բամբակ,
Թելեր-թելեր անելով
Քեզ փայփայեմ, մեր բամբակ:

Սպիտակ չթեր ու կտավ
Քեզնից գործեմ, հեյ բամբակ,
Գույներ անեմ, վոր խնդա
Սիրուն դեմքդ, մեր բամբակ:

Խորհրդային արևը
Քեզ կյանք տվեց, իմ բամբակ,
Բանվորական թևերը
Քեզ բոյ տվին, ջան բամբակ:

Մեր բարեկամ ու ընկեր,
Բուլճիկ էս, մեր բամբակ,
Դու մեր կամքով էս յեկել,
Բացվիր, լցվիր, հեյ բամբակ:

ԲԱՌԵՐԻ ԲՍՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Բարդան անել—մեծ տոպրակ լցնել:
Բարդան—մեծ տոպրակ:
Նագուկ—քնքուշ, նուրբ:
Մալանչ—բամբակի քուլա, հյուս:

— Իմ ուսերին 80 տարի յե նստած,— պատմում
ե քեռի Միխակը,— վորից 60 տարին անց եմ կաց-
րել ասածուն յերկրպագելով և աղոթելով: Եդ 60
տարվա ընթացքում հիվանդ ենք ունեցել՝ մատաղ
եմ արել, վոր լավանա. հողը լավ բերք չի տվել՝
աղոթել եմ աստծուն, վոր անձրև գա. գործս ան-
հաջող ե անցել՝ գիշեր-ցերեկ աղաչել ու պաղատել
եմ աստծուն, վոր նեղ զրությունից ինձ հանի: Մի
խոսքով ամեն մի նեղ վիճակում յեղած ժամանակ
աստծու ոգնությանն եմ դիմել... բայց բոլորն
իրգուր:

Մի տարի ել. հիշում եմ, յերկար ժամանակ
անձրև չեկավ, մեր արտերը չորանում եյին: Մեր
գյուղացիներն ինձ ուղարկեցին գյուղի տերտերի
մոտ խնդրելու, վոր նա մաղթանք անի, անձրև
բերի: Այդպես ելարեցի: Տերտերը լսելով ինձ՝ ասաց,
— Քեռի Միխակ, արի դու մի-յերկու որ հետո,
մինչև յես կաղոթեմ աստծուն և ճիշտը կիմանամ
նրա միտքը:

Մի-յերկու որ հետո գնացի: Տերտերը յեկեղե-
ցումն եր: Ինձ տեսնելուն պես կարծես մի բան հի-
շելով նա մտավ իր խուցը, իսկ ինձ ասաց, թե մի
քիչ սպասիր: Յես հետաքրքրությունից նրա հետե-
վից գնացի և տեսա կիսաբաց դռնից, թե ինչպես
նա ուշադիր դիտում եր պատից կախված ժամա-
ցույցի նման մի կլոր բան: Քիչ հետո տերտերը
դուրս յեկավ և ասաց, — ղե գնանք... Աստված
խոստացավ մեր մեղքերը ներել և անձրև ուղարկել:

Գնացինք, տերտերը մաղթանք արեց: Ժողովուրդն ահազին մատաղ եր մորթեց, տերտերին ահազին խաչհամբուր տվին... և խեղապես անձրև յեկաւ:

Հետո, Խորհրդային իշխանութեան որոք, յերբ յես մեր գյուղատնտեսի մոտ տեսա բարոմետրը (ծանրաչափ), նոր իմացա տերտերի խաբեբայութեանը: Տերտերի խցում պատից կախված ժամացույցի նման գործիքը բարոմետր եր, վոր ցույց ե տալիս ողի ճնշումը և նախատեսում անձրևային յեղանակը: Տերտերն անգամ գիտութեանն սգտագործել եր մարդկանց խաբելու համար:

ՍՈՒՏԼԻԿ ՎՈՐՍԿԱՆԸ

Հորս կնուներով, մորս ծնունդով, վեր կացանք մի որ հինգ ու վեց հոգով, թրով-թվանքով վորսի գնացինք: Հաղին եր, Հյուզին եր, Չատին եր, Մատին եր, հայրս եր, յես եյի, գնացինք վորսի...

Սարեր, ձորեր դուզ գնացինք, վորտեղ վորս կար՝ սուս ու փոս գնացինք, վորտեղ ահ եր՝ կուզ ու կուզ գնացինք...

Գնացինք, գնացինք, շատ թե քիչ, մին ել տեսնենք յերեք լիճ. յերկուսը ցամաք, մնի մեջն ել իսկի շուր չկա: Մին ել, ընր, մտիկ տանք, վոր այս անշուր լճում լողում են, ճշում յերեք հատ սպիտակ բադ, յերկուսը սատկած են, մինն ել կենդանի չի:

- Հաղի, տուր, հա, տուր,
- Թե՛ թվանք չունեմ:
- Հյուզի, տուր, հա, տուր,
- Յես ել չունեմ:

— Չատի... Մատի...

— Մենք ել չունենք:

— Բա ի՞նչ անենք...

Հորս ձեռին կարճ ու յերկար, հաստ ու բարակ մի փետ կար, յերեսն առավ, նշան դրեց, մին ել՝ տրանք, վոր կրակեց... նա կրակեց, յես գարկեցի՝ վոր գարկեցի՝ փովեց՝ եսպես — ամեն թևը հինգ գազ ու կես...

- Հաղի, դանակ...
- Թե՛ դանակ չունեմ:
- Հյուզի, դու...
- Յես ել չունեմ:
- Չատի, Մատի...
- Մենք ել չունենք:
- Բա ի՞նչ անենք...

Հերս ել ունի, բերան չունի:

Ես անբերան դանակը քաշեցինք: Հաղին մորթեց, չկարաց, Հյուզին մորթեց, չկարաց, Չատին չկարաց, Մատին չկարաց. հերս ել չկարաց, յես քաշեցի մորթեցի:

Մորթեցի, վեր գցեցի. բազ մի ասիլ, մի գոմեշ ասա: Հաղին շալակեց, չկարաց, Հյուզին շալակեց, չկարաց, Չատին չկարաց, Մատին չկարաց, հերս ել չկարաց, յես շալակեցի: Շալակեցի, գնացինք:

Գնացինք, գնացինք, հասանք մի տեղ, մին ել տեսնենք յերեք գեղ, յերկուսի տեղն իսկի չի յերեվում, մնումն ել իսկի շենլիկ չկա: Ես անշեն գեղում դես ման յեկանք, դեն ման յեկանք, մի տուն գտանք, մեջը յերեք պառավ, յերկուսը մեռած, մինի բերանումն ել շունչ չկա:

— Տղերք, ասինք, յեկեք բազով փլավ անենք:

Ես անշունչ պառավը գնաց դես ման յեկավ,
դեմ ման յեկավ, կես բրինձ գտավ, յերեք պղինձ,
յերկուսը ծակ, մինն ել իսկի տակ չունի:

Չուրը լցրինք ես անտակ պղինձը, մեջն ածինք
բազն ու բրինձը, անկրակ յեփեցինք: Յեփեց, յեփեց,
միան ու բրինձը գնացին, մնաց շուրը:

Վորսից յեկած սոված մարդիկ, վրա յեկանք,
կերանք, կերանք, վոչ աչքներս բան տեսավ, վոչ
բերաններս բան մտավ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Շենլիկ — բնակչութուն:
Պղինձ — կաթսա:

ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Առյուծը ծերացել եր. թաթերը թուլացել էյին,
ատամները՝ թափվել. ել չեր կարողանում վորս
բռնել: Նա մտածեց խորամանկությամբ վորս ճա-
րել. պառկեց քարայրում ու հիվանդ ձևացավ:
Գաղանները գալիս էյին նրան տեսության: Բայց
վոչ վոք հետ չեր դառնում: Առյուծը բռնում եր
նրանց և ուտում:

Յեկավ նաև ազվեսը, կանգնեց քարայրի
մուտքի առջև և հարցրեց.

— Ինչպե՞ս ե առողջությունդ:

Առյուծը պատասխանեց.

— Վատ ե. ինչո՞ւ ներս չես գալիս, բարեկամս:

Ազվեսը պատասխանեց.

— Կգայի, բայց տանդ շուրջը թողած հետքերն
ուրիշ բան են ասում. շատերն են ներս մտել, իսկ
վոչ վոք դուրս չի յեկել:

ԱՐԵՎՆ ՈՒ ԾԻՍԾԱՆԸ

Անձրեվից հետո ծագեց արևն ու ծիածան
կապեց:

— Նայիր ինձ, քեզնից գեղեցիկ եմ, — ասավ
ծիածանն արեվին, — տես քանի գույն ունեմ.
Կանաչ, կարմիր, կապույտ, դեղին...

— Բայց գիտե՞ս, վոր յես եմ քեզ այդքան գույն
սովողը, — ասաց արեվը:

— Դո՞ւ... սուտ ե, — ժպտաց ծիածանը:

— Սո՞ւտ ե, — ասաց արևն ու մտավ ամպի

տակ:
Արեվն ամպի տակ մտավ թե չե, ծիածանն
ել անհետացավ:

Ճ Ն Ճ Ղ Ո Ի Կ

Վորսից վերադառնալիս անց էյի կենում մի
պարտեղի միջով: Շունս վազում եր իմ առջևից:
Նա հանկարծ իր քայլերը փոքրացրեց և սկսեց
կամաց ու զգուշ առաջ գնալ. կարծես վորսի հոտ
եր առել:

Յես նայեցի ու փոքր ինչ հեռու, ճամբի վրա
տեսա մի փոքրիկ ճնճղուկ, վորի կտցի շուրջը դե-
ղին եր, իսկ գլուխն ազվամազով ծածկված: Նա
ընկել եր բնից ու անշարժ պառկել եր, միայնակ
ու անոգնական, հազիվ դուրս յեկած փոքրիկ թևերը
փռած: Յերը շունս ծանրաքայլ մոտենում եր
նրան, հանկարծ մոտակա ծառի վրայից մի մեծ,
սև կրճքով ճնճղուկ քարի պես ցած նետվեց, ըն-
կավ ուղղակի շան առջևը և հուսահատ ու ծղրտո-

ցով մի յերկու անգամ թռավ դեպի շան դուռնչը:
Նա հարձակվում էր, վոր փրկի, պահպանի ձագին... Նրա փոքրիկ մարմինը դողում էր սարսափից:
Նրա ծղրտոցը կատաղի յեր: Նա ուժից ընկնում էր. նա իրեն զոհում էր:

Ի՞նչ անագին հրեշ պիտի յերեվար նրա աչքին շունը... Բայց և այնպես նա նստած մնալ չկարողացավ բարձր ու անվտանգ ճյուղին...

Շունս կանգ առավ, յետ քաշվեց...

Յես շապտեցի շվարած շանս հետ կանչել և հեռացա՛ զգալով մեջս մի պատկառանք դեպի այդ փոքրիկ թռչունը:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Աղվամազ - փոքրիկ, քնքուշ փետուրներ:

Նետվել - ուժով ընկնել:

Հրեշ - անճոռնի, այլանդակ, սարսափելի մի բան:

Շվարել - շփվել, մոլորվել:

Պատկառանք - հարգանք:

ԿԱՏՈՒՆ ՈՒ ԱՌՅՈՒԾԸ

(Ժողովրդական նեխար)

Մի որ առյուծը պատահելով իր ցեղակից կառվին՝ հարցրեց.

— Միրելի ազգակից, ի՞նչ է պատճառը, վոր դուք այդպես պատիկ եք մնացել:

— Պատճառն այն է, վոր մարդու ձեռի տակ ենք ապրում, — պատասխանեց կատուն:

Առյուծը խնդրեց կառվին, վոր մի ցույց տար իրեն այդ մարդ ասած արարածին:

Այդպես խոսակցելով, յերբ նրանք մտան անտառ, կատուն տեսավ անտառի խորքում մի փայտահատ, վոր փայտ էր կարում:

— Տեր իմ, — ասաց կատուն, — ահա մարդ ասածն այն փայտ կարողն է: Մոտ գնա ու տես:

Առյուծը մոտեցավ մարդուն, բարև տվավ ու ասաց.

— Լսել եմ, վոր դուք, մարդիկդ, շատ ուժեղ եք, արի ուժներս փորձենք, մենամարտենք:

— Շատ բարի, առյուծ թագավոր, — պատասխանեց մարդը: — Լավ առաջարկություն եք անում: Բայց բանն այն է, վոր մենամարտելու հազուստս վրաս չե: Յեթե բարեհաճեք մի քիչ սպասել, վոր գնամ հազուստս բերեմ, ինչո՞ւ չե, ձեր առաջարկն ուրախությամբ կկատարեմ: Միայն թե, — ավերացրեց մարդը, — հիմիկվանից պիտի յերդում տաք, վոր մինչև իմ զալն այստեղ կսպասեք:

Այս ասելով՝ մարդը մի անագին գերանի հաստ ծայրից սեպ տվավ, ձեղքեց գերանը և, դառնալով առյուծին՝ ասաց.

— Համեցեք, ձեր յերկու թաթն այս ձեղքվածքի մեջ դրեք ու յերդում տվեք, վոր կսպասեք:

Առյուծը հավատալով մարդու ասածին՝ այդպես էլ արավ:

Մարդն իսկույն սեպը դուրս հանեց, բացվածքը վրա յեկավ ու այնպես սեղմեց առյուծի յերկու թաթը, վոր կենդանիների թագավորն էլ ազատվելու հնար չունեիր:

Ապա առնելով մի հաստ փայտ՝ մարդը վրա ընկավ առյուծին ու տուր թե կտաս:

Առյուծը տեսնելով, վոր կատուն հեռվում կանգնած նայում է, ասաց.

— Կատու յեղբայր, թե վոր ծեծ ուտելով յես
եւ քո չափ պատիկանամ, մարդն ինձ բաց կլթողնի:
— Վոչ, — պատասխանեց կատուն, — քո մորթին
իմ մորթուց թանգագին ե: Մինչև չմաշկի, բաց չի
թողնի:

Այս խոսքերը լսելով՝ առյուծն ասաց.

— Այն, մարդու ձեռքի տակ վոչ թե առյուծները
և ուրիշ կենդանիները, այլ սարերն եւ կպատիկանան:

ՃՊՈՒՌՆ ՈՒ ՄՐՁՅՈՒՆԸ

Թռի-վռի մի ճպուռ

Վողջ ամառը շուռ ու մուռ,

Յերգեց, ճոռաց,

Ճոճոաց:

Մինն եւ, ըհը, ձմեռը

Փռեց իրա թևերը,

Բացեց գորգը սպիտակ,

Դաշտերն առավ ճյուղի տակ:

Անցան պայծառ որերը...

Յեկան որեր ցրտաշունչ,

Ճպուռն ընկավ լուռ ու մուռն,

Քաղցած փորին եւ ինչ յերգ,

Ցուրտը տարավ վրա ու ձեռք:

Ջրնգր-զրնգր դողալով,

Ծանր-ծանր սողալով,

Նա մըջյունին ասում եր.

— Գլխիդ մատաղ, սանամեր,

Մի ճար արա շունչ առնեմ,

Ցրտից, սովից չմեռնեմ:

Կերակրի, տաքացրու,

Մինչեւ գարուն ապրեցրու:

— Ի՞նչ պատահեց, սանիկս,

Չարմանում եմ, Չանիկս,

Չաշխատեցիր ամառը,

Ասա, ի՞նչ եր պատճառը:

— Եղպես բանի, սանամեր,

Եւ ժամանակ ո՞վ ուներ,

Են խոտերում բուրավեա

Յերգում եյի մերոնց հետ:

— Ուրեմն դու... — այո, յես,

Վողջ ամառը դես ու դեն

Յերգ յերգեցի մշտապես:

— Յերգեցիր, համ, շատ բարի,

Այժմ եւ բռնի վերվերի,

Քամին ծափ տա, դու՛ պարի:

ՄԱՅՐ ԱՐԱԳԻԼԸ

Շոգ եր: Իրիկվա դեմ յերկինքը ծածկվեց սև
ամպերով: Լավեց վորոտ: Կայծակը փայլատա-
կում եր:

Յես դաշտից շտապ տուն եյի վերադառնում:

Գյուղից դուրս, բանջարանոցի կողքին, բար-
դու բարձր ճյուղերի մեջ արագիլը բուն եր հյու-
սել:

Իմ աչքի առաջ կայծակից բռնկվեցին բարդու-
չոր ճյուղերը: Բոցը տարածվեց բարդու ամբողջ
յերկարությամբ:

Կանգ առա: Բնից լսվեց արագիլի ճուտերի
ճվճվոցը: Կարծես ոգնություն էյին խնդրում:

Այդ ձայնին վրա հասավ մայր արագիլը:

Բունն արդեն պատած եր կրակի բոցերով:
Արագիլն ուզեց իջնել ձագերի մոտ, բայց բոցերը
խանգարեցին նրան: Նա բարձրացավ և բնից վերև
սկսեց պտավել ողում:

Քիչ հետո ուզեց նորից իջնել բունը, բայց
բոցերն այրեցին նրա թևերը: Նա ղժվարությամբ
վեր թռավ ու սկսեց թափահարել խանձված թևերը,
մինչև վոր ուժասպառ ընկավ իր ձագերի մոտ և
վողջ-վողջ այրվեց նրանց հետ:



Յ Ա Ն Կ

	ԱՅԲԲԵՆԱՐԱՆ	Եջ 1—41
1.	Վլադիմիր Իլյիչ Լենին	47
2.	Մայիսի 1-ն աքսորում	50
3.	Ժամի չորսին	51
4.	Իոսիֆ Վրասարևինովիչ Ստալին	54
5.	Յերկար ապրի մեր Ստալինը	57
6.	Ինտերնացիոնալ	58
7.	ԽՍՀՄ-ի տասնմեկ յեղբայրական հանրապետություն- ները	59
8.	Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիս- տական Հանրապետություն	61
9.	Ուկրաինական Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիս- տական Հանրապետություն	62
10.	Բելոռուսական Հանրապետություն	63
11.	Ադրբեջանական	64
12.	Վրացական	65
13.	Հայկական	66
14.	Թուրքմենական	68
15.	Ուզբեկական	68
16.	Տաջիկական	70
17.	Ղազախական	70
18.	Կիրգիզական	72
19.	Աշխարհում մի մեծ յերկիր կա—փոխադր.	72
20.	Պատրաստ ենք պաշտպանության	74
21.	Միայն յերկու սանտիմետր	77
22.	Խորհրդային հայրենասիրության որինակ—փոխադր.	78
23.	Յերկու նամակ—փոխադրութ.	78

24.	Ապստամբութիւնն Պոտյոմկին զրահանալի վրա— փոխադրութ.	81
25.	Մեկ եւ, մեկ եւ—Հ. Հակոբյան	83
26.	Յերեկ և այսօր—փոխադր.	84
27.	Նրանք բախտավոր են—Շուրխով	85
28.	Խրամգեսին—Հ. Հակոբյան	86
29.	Յեթե շատ սովորեմ, ավելի լավ կաշխատեմ	87
30.	Գարուն—Հայր. Հայրապետյան	88
31.	Ատուժ եմ քեզ—Պուշկին	89
32.	Նյու-Յորքի փողոցում—փոխադր.	89
33.	Բանվորունու որորը—Ալ. Մատուրյան	90
34.	Գեղջուկի մտածմունքը—Կոլցով	91
35.	Զիկագոյուժ «աշխատանք» կա—փոխադր.	92
36.	Համաշխարհային պատերազմի հաշվեկշիւ—փոխա- դրութիւնն	95
37.	Հին գյուղը—Հով. Թումանյան	97
38.	Մարզը ձի—Աթ. Խնկոյան	97
39.	Յերկու մեքենա—փոխադրութ.	98
40.	Լինա Ողենա—փոխադրութ.	99
41.	Փախուստ—փոխադրութ.	101
42.	Հերոս բժիշկը—փոխադրութ.	103
43.	Միչուրինի ալգին—փոխադրութ.	104
44.	Մեր կոլխոզի արտերը	105
45.	Զան, բամբակ	106
46.	Ինչպե՞ս տերտերը գուշակեց անձրև գալու մասին— փոխադրութիւնն	107
47.	Սուտլիկ վորսկանը—Հով. Թումանյան	108
48.	Սուլուժն ու աղվեսը—Ղ. Աղայան	110
49.	Արևն ու ծիածանը—Աթ. Խնկոյան	111
50.	Ճնճղուկ—Տուրգենյով	111
51.	Կատուն ու առյուծը—ժողովրդական հեքիաթ	113
52.	Ճպուռն ու մրջյունը—Աթ. Խնկոյան	114
53.	Մայր արագիլը	115
	Հատվող այբբուրեն	117

ՈՒՂՂՈՒՄՆԵՐ

Դասագիրքը կազմող ընկ. Ա. Ճուղուրյանի մեղքով սպրդել են հետևյալ սխալները.

եջ	սպված է	պետք է լինի
20.	Մեր աշխատանքի վորա- կը լավանում է:	Մեր աշխատանքի վորա- կըն որ որի լավանում է:
32.	Պատի թերթը մեծ աշ- խատանք տարավ:	Պատի թերթը խոշոր աշ- խատանք տարավ:

Վ Ր Ի Պ Ա Կ

Սրբագրիչ ընկ. Գ. Հակոբյանի մեղքով սպրդել է հետևյալ վրիպակը.

եջ	սպված է	պետք է լինի
24.	Նրանք Պիոներներ են:	Նրանք պիոներներ են:

04

Պատ. խմբագիր՝ Ա. Նիկողոսյան
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան
Կանտրոլ սրբ. Ս. Շահբաղյան
Կանտրոլ սրբ. 33 Եղից՝ Ս. Շահբաղյան

Փլավլիտի լրագրք Բ - 3151 Հրատ. 442)
Պատվեր 69. Տիրած 75000.
Տպագր. Մամ. 7 5
Մի մամուլում ու. 23948 Հեղինակ. 7.5 մամուլ
Հանձնված է արտադրության 17 հունվարի 1938 թ.
Ստորագրված է տպագրության 27 փետրվարի 1938 թ.
Գինը 1-40 կոպ.
Գեղարատի I տպարան, Յերեվան, Հենինի 65

« Ազգային գրադարան



NL0245971

Փակցրու հաստ թղթի կամ բարակ սովաբաթղթի (կարտոն) վրա: Կտրատիր և ստացված տառերից բառեր կազմիր: Շարժական տառերը պահիր առանձին տուփի մեջ:

Ա	Ա	ա	ա	ա	Բ	բ	բ	Գ	գ	գ	Դ	դ
դ	Ե	ե	ե	ե	Զ	զ	զ	Ը	ը	ը	Թ	թ
թ	Ժ	ժ	ժ	Ի	ի	ի	Լ	լ	լ	Խ	խ	խ
Տ	Ժ	ժ	Կ	կ	կ	Հ	հ	հ	Ձ	ձ	ձ	Ղ
ղ	ղ	Ճ	ճ	Ճ	Մ	մ	մ	մ	Յ	յ	յ	յ
Ն	ն	ն	ն	Շ	շ	շ	Ո	ո	ո	Ու	ու	ու
ու	Չ	չ	չ	Պ	պ	պ	Ջ	ջ	Ռ	ռ	ռ	Ս
Ս	ս	ս	ս	Վ	վ	վ	Տ	տ	տ	տ	Ր	ր
ր	Յ	յ	յ	Փ	փ	փ	Ք	ք	ք	Ֆ	ֆ	ֆ

311

18940

ԳԻՆԸ 1 Ռ. 40 ԿՈՊ.

ԵՄԿՅԱՐԻ

ԴՅԱ ՆՏՈՒ ԵՐՈՏԵՒԻ
ՈՒ ԼԻԿՎԻԴԱՐԻՆ ՆԵՐՐԱՄՈՒՆՈՒՄԻ
ԴԻԱ ԱՐՄ. ՍՏՐ. ԵՐԵՎԱՆ. 1938